3113

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐՈՑ։

Արարեալ համառօտ հարց՝
մամբք և պատասխանեօք, յա-
ղագս դեռահասակ ման-
կանց։

Թարգմանեալ ՚ի Ռուսաց
լեզուէ։

Ի Հայրապետութեան Տեառն
ԵՓՐԵՄԻ սրբազնասուրբ
կաթուղիկոսի ամ՟ Հայոց։

Հրամանաւ Տեառն Ներսիսի Առաքե-
լագործ սրբազան Արհիեպիսկոպոսի
և առաջնորդի ամ՟ Հայոց վրաս-
տանի և այլոց։

Առաջին անգամ տպեալ Յամի 1828։

Երկրորդ տպագրութիւն։

Ի ՇՈՒՇԻ
Յամի Տեառն 1832։

# ԳԼՈՒԽ Ա.

## Յաղագս ստեղծագործութեան աշխարհի:

### Հարցմունք:

Ո՞վ ստեղծ զաշխարհս:

Պատասխանի

Աստուած:

Հարց. Յորմէ՞ ստեղծ:

Պատ. Յոչ ընչէ:

Հ. Ո՞րպէս ստեղծ զայն:

Պ. Բանիւն իւրով:

Հ. Եւ ի՞նչ վախճան:

Պ. Վասն փառաբանութեան անուան իւրոյ, և յայտնելոյ արարածոց զբարութիւն աստուածութեանն:

Հ. Ի քանի՞ աւուրս արար զայն:

Պ. Ի վեց աւուրս:

Հ. Զի՞նչ արար յառաջնում աւուր:

Պ. Զերկինս և զերկիր, և ապա զլոյս:

Հ. Զի՞նչ արար յերկրորդում աւուր:

Պ. Զհաստատութիւն երկնից։

Հ. Զի՞նչ արար յերրորդում աւուր։

Պ. Բաժանեաց զջուրսն 'ի հողոյ, և հրամայեաց երկրի արտադրել զբոյսս և զտունկս։

Հ. Զի՞նչ արար յաւուրն չորրորդի։

Պ. Զարեգակն, զլուսին, և զաստեղս։

Հ. Զի՞նչ արար յաւուրն հինգերորդի։

Պ. Զթռչունս երկնից, և զձկունս ծովու։

Հ. Զի՞նչ արար յաւուրն վեցերորդի։

Պ. Գոյացոյց զերկրային կենդանիս, և արար զմարդն ըստ պատկերի իւրում։

Հ. Արդեօք արա՞ր ինչ յաւուրն եօթներորդի։

Պ. Յետ ստեղծագործելոյ զարարածս զայսոսիկ այլ ևս նորագոյն ինչ ոչ արար։

Հ. Յորմէ՞ ստեղծ Ած զմարդն առաջին։

Պ. Զմարմինն 'ի հողոյ, իսկ զհոգին. ըստ պատկերի և ըստ նմանութեան իւրոյ։

Հ. Վասն է՞ր արար Ած զմարդն։

Պ. Վասն զի ծանիցէ զնա և սիրեսցէ, նմա և եղիցի պիտանացու յամենայնի։

Հ. Յորմէ՞ արարաւ Եւայ՝ կին նախնի։

Պ. 'Ի կողէն ադամայ։

Հ. Վասն է՞ր այդպէս։



Պ. Առ 'ի ցուցանել՝ թէ նոքա երկոքեանն 'ի միոյ մարմնոյ են։

Հ. Զի՞նչ էր դրախտն երկրային։

Պ. Էր տեղի ծառատունկ և վայելուչ, զոր աստուած եդ ադամայ և եւայի 'ի բնակութիւն նոցա։

Հ. Յորպիսի կացութեան էին նոքա անդ։

Պ. 'Ի բարի կացութեան. և էին անմահք։

## ԳԼ. Բ։

### Յաղագս յանցանաց նախաստեղծ հարցն։

Հ. Մնացի՞ն արդեօք նոքա միշտ 'ի սուրբ և յերանելի կացութեան յայնմիկ։

Պ. Ո՛չ. այլ կորուսին զայն, անցանելով զպատուիրանաւն Տեառն Աստուծոյ ստեղծողին իւրեանց։

Հ. Ո՞վ եղև պատճառ նոցա։

Պ. Սատանայ, որ պատրեաց զեւայ ճաշակել զպտուղն մահու, որ արգելեալն էր յԱծոյ. և եւայ հաւանեցոյց զայրն իւր 'ի յուտել և կերին։

Հ. Որպէս պատժեաց Ած զադամ և զեւայ վն ուտելոյն։

Պ. Արտաքսեաց զնոսա յերկրաւոր դրախտէն։

Հ. Եթո՞ղ մխիթարութիւն ինչ նոցա յայնպիսի կացութեան անդ։

Պ. Այո՛. քանզի՝ խոստացաւ նոցա ըստ ժամանակին առաքել զփրկիչ. որ ջախջախեսցէ զիշխանութիւն սատանայի։

Հ. Յորպիսի կացութեան մնացին նոքա յետ պատուիրանազանցութեանն։

Պ. Ի մեծի թշուառութեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Հ. Որպիսի չարիք հասին մարմնոյ նոցա։

Պ. Աշխատանք մեծ, անհանգիստ կեանք, ցաւք և մահ եւս։

Հ. Իսկ հոգւոյ նոցա զի՞նչ չարիք հասին։

Պ. Մթութիւն մտաց, և փոխարկութիւն զօրաձութեանց։

Հ. Ի սմանէ զի՞նչ յառաջեաց։

Պ. Ամենայն մեղք։

Հ. Իսկ ի մեղաց։

Պ. Մահ մշտնջենաւոր։

Հ. Ո՞յք էին նախկին զաւակք նոցա։

Պ. Աբէլ և Կայէն։

Հ. Ե՞րբ ծնան նոքա զնոսա։

Պ. Զկնի մեղանչելոյն իւրեանց։

Հ. Եղե՞ն արդեօք որդիք նոցին մասնակից մեղաց նոցա։



Պ. Եղեն. ոչ միայն որդիք նոցա, այլև որդիք որդւոց նոցին։

Հ. Տակաւին տևէ՞ մասնակցութիւնս այս։

Պ. Անփոփոխապէս ամենայն մարդիկ այսու մեղօք ծնանին։

## ԳԼ. Գ.

### Յաղագս Ջրհեղեղին և բնական օրինացն։

Հ. Ո՞ եղև առաջին մարդասպան յաշխարհի։

Պ. Կայէն, որ սպան զեղբայրն իւր զԱբէլ։

Հ. Վասն է՞ր սպան զնա։

Պ. Վասն զի նախանձեցաւ ընդ առաքինութիւն եղբօրն՝ զոր Աստուած սիրէր։

Հ. Արդեօք ամենայն մարդիկ այնպէ՞ս չարաբարոյք եղեն որպէս Կայէն։

Պ. Ըստ մեծի մասին։

Հ. Ո՞չ ոք մնաց հաճոյ Աստուծոյ։

Պ. Նոյ միայն հաճոյ եղև Աստուծոյ։

Հ. Որպէս պատժեաց զնոսա Աստուած։

Պ. Ջրհեղեղաւ։

Հ. Զի՞նչ է ջրհեղեղդ այդ։

Պ. Մեծագոյն հեղեղ ջուրց, որ ծածկեաց զամ՟ երկիր։

Հ. Զի՞նչ եղեն մարդիկ։

Պ. Նոքա ամենեքեան ընկղմեցան և մեռան։

Հ. Իսկ այլ կենդանիք զի՞նչ եղեն։

Պ. Նմանապէս մեռան։

Հ. Նոյ նահապետն զիա՞րդ ապրեցաւ։

Պ. Պահեաց զնա ած ՚ի տապանի։

Հ. Զի՞նչ էր տապանն նոյի։

Պ. Նաւ մեծ պատեալ յերկուց կողմանց ներքուստ և արտաքուստ։

Հ. Նա՞ միայն փրկեցաւ անդ։

Պ. Ինքն և ընտանիք իւր։

Հ. ՚Ի կենդանեաց ևս եղե՞ն փրկեալ։

Պ. Եօթն եօթն ՚ի սուրբ, և երկու երկու յանսուրբ ամենայն տեսակ կենդանեաց ապրեցան՝ ըստ կամացն Այ։

Հ. Ամենայն մարդիկ ըստ որում մարդ՝ եղբարք մե՞ր են։

Պ. Այո՛. վասն զի՝ մեք ամենեքեան յադամայ և ՚ի նոյէ յառաջանամք։

Հ. Զի՞նչ են բնական օրէնքն։

Պ. Գիտութիւն և խղճմտանք։

Հ. Նոքա զի՞նչ ուսուցանեն մեզ՝ նկատմամբ Աստուծոյ։

Պ. Զի բաց ՚ի նմանէ ոչ զոք համարեսցուք



աստուած. և օրինաց նորա կատարելապէս հնազանդեսցուք։

Հ. ՚Ի կողմանէ մարդկան զո՞րպէս։

Պ. Զի մի՛ արասցուք այլոց այնպիսի ինչ, զոր ինչ ոչ կամիմք՝ թէ արասցեն մեզ։

Հ. Իսկ ՚ի մերոյս կողմանէ զո՞րպէս։

Պ. Չափաւորել զիղձս և զկամեցողութիւնս մեր։

Հ. Ազգք և տոհմականք նոյի պահեցի՞ն արդեօք զօրէնս զայս։

Պ. Ոչ. այլ առաւել ևս ամբարշտեցան։

Հ. Ի՞նչ մեղան նոքա ընդդէմ այ։

Պ. ՚Ի տեղի ածպաշտութեն ըստ մեծի մասին երկիրպագին արեգական, լուսնի և այլ արարածոց։

Հ. Միթէ և ՚ի միջի իւրեանց զայլ զանօրէնութիւն ինչ գործեցին։

Պ. Նոքա զծնողս իւրեանց ոչ պատուէին, ըսպանանէին, կողոպտէին և զմեծամեծս զըրպարտէին. զարդարսն ոչ պահպանէին և յամի հետևէին չար ըղձից և անկարգ կրից իւրեանց։

## ԴԼ. Դ։

### Յաղագս Աբրահամու և այլոց նահապետաց

Հ. Յետ ջրհեղեղին ո՞ւր պահպանեցաւ օրէնքն բնական։

Պ. Ի մէջ ցեղին սեմայ։

Հ. Ընդ ում ուխտեաց Աճ։

Պ. Ընդ աբրահամու։

Հ. Զինչ խոստացաւ նմա։

Պ. Առնել զնա ազգ մեծ։

Հ. Զի՞նչ ևս։

Պ. Տալ զերկիրն քանանու։

Հ. Զի՞նչ խոստացաւ նմա Աճ առաւել ևս հարկաւորագոյն։

Պ. Ի զաւակի նորա օրհնել զամ ազգս երկրի։

Հ. Զի՞նչ նշանակէր այդ։

Պ. Զի փրկիչն աշխարհի ծնանելոց էր ի զաւակէ նորին. որպէս և եղեն իսկ։

Հ. Զի՞նչ էր նշան խոստմանն այ ընդ աբրահամու։

Պ. Թլփատութիւն։

Հ. Ո՞վ էր որդին աբրահամու։

Պ. Իսահակ։



Հ. Վասն է՞ր կամեցաւ հայրն աբրահամ պատարագ մատուցանել զիսահակ որդին իւր։

Պ. Զի ցուցցէ այնու զհնազանդութիւն իւր այ։

Հ. Ո՞ր ազգաւ զայն հրամայեաց նմա աստուած։

Պ. Զի փորձեսցէ զհաւատս նորա։

Հ. Ո՞վ էր յակոբ։

Պ. Որդին իսահակայ։

Հ. Այլով կերպիւ զի՞նչ անուանիւր։

Պ. Իսրայէլ։

Հ. Քանի՞ որդիս ունէր նա։

Պ. Երկոտասան։

Հ. Զի՞նչ անուանին նոքա։

Պ. Նահապետք։

## ԴԼ. Ե։

### Յաղագս գործոց Եգիպտացւոց [illegible]

Հ. Ո՞վ էր յովսէփ։

Պ. Մին յերկոտասան որդւոցն յակոբայ նահապետին։ Եղբարք նորա վաճառեցին զնա առ նախանձու. իսկ նա ընդ երկար ժամանակս եկաց յեգիպտոս իբրև ծառայ.

ապա մեծամեծ փառս ընկալաւ 'ի փարաւոն Թագաւորէն։

Հ. Զի՞նչ արար նա ընդ եղբարս իւր փոխարէն չարութեան նոցա։

Պ. Նա ներեաց նոցա, և բնակեցոյց զնոսա յԵգիպտոս հանդերձ ամ՟ ընտանեօքն իւրեանց։

Հ. Զի՞նչ անցք անցին ընդ որդիսն իսրայէլի 'ի յԵգիպտոս։

Պ. Նոքա բազմացան յոյժ։

Հ. Զի՞նչ գործեաց ընդ նոսա այլ Թագաւորն եգիպտացւոց, որ ոչ ճանաչէր զՅովսէփ։

Պ. Կամեցաւ սպանել զամենեսին։

Հ. Ո՞վ պահեաց զնոսա 'ի նմանէ։

Պ. Ա՟ծ։

Հ. Զո՞ առաքեաց ա՟ծ 'ի փրկել զնոսա։

Պ. Զմովսէս։

Հ. Զի՞նչ արար մովսէս։

Պ. Սքանչելիս մեծամեծս, որովք ստիպէր փարաւոնի կատարել զհրամանն աստուծոյ։

Հ. Զի՞նչ էր պասեքն։

Պ. Պասեքն էր գառն՝ սահմանեալ յողջակէզ. և զոր կերին իսրայէլացիք փոքր



ինչ՝ յառաջ քան զելանելն իւրեանց յեգիպտոսէ, և զազատութի՟ն անտի։

Հ. Զի՞նչ նշանակէր ազատիլն իսրայէլացւոց։

Պ. Զի փրկելոց էր ա՟ծ ըստ իւր խոստմանն զամենայն մարդիկ 'ի մեղաց և 'ի սատանայէ։

## ԳԼ. Զ։

### Յաղագս ուղեգնացութեան յանապատն։

Հ. Ո՞ւր գնացին իսրայէլացիք յետ ելից իւրեանց յեգիպտոսէ։

Պ. Յերկիրն քանանացւոց, ուր էած զնոսա աստուած։

Հ. Ընդէ՞ր էած զնոսա անդ։

Պ. Զի կատարեսցէ զխոստումն իւր։

Հ. Ո՞րպէս անցին նոքա ընդ ծովն կարմիր։

Պ. Յարոյց աստուած զհողմն, որով պատառեալ զծովն՝ եբաց զյատակ նորա. ընդ որ անցին նոքա առանց վնասու։

Հ. Ապա ընդ ո՞ր գնացին։

Պ. Ընդ անապատն մեծ։

Հ. Զի՞նչ կերէին նոքա անդ։

Պ. Մանանայ՝ զոր առաքեաց Աստուած վասն նոցա 'ի յերկնից։

Հ. Երբ նոքա ո՛չ կարացին գտանել զջուր· ապա ուստի՞ գտին զայն։

Պ. Ած բղխեցոյց 'ի վիմէ։

Հ. Ե՞րբ ետ նոցա Աստուած զօրէնս իւր։

Պ. Ի յիսներորդ աւուր յետ ելանելոյն նոցա։

Հ. Յո՞րում տեղւոջ։

Պ. Ի լեառն սինայ։

Հ. Ո՞րպէս երևեցաւ նոցա լեառնս այս։

Պ. Հրով, որոտմամբ, և կայծակամբք կործանեալ։

Հ. Ասա ինձ զպատգամսն զորս ետ նոցա Աստուած։

Պ. Նախ՝ ես եմ տէր Աստուած քո, որ հանի զքեզ 'ի ծառայութենէ Եգիպտացւոց. և մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն։ Երկրորդ. մի՛ արասցես քեզ կուռս՝ և մի՛ այլ ինչ որք նմանիցին նոցա. և մի՛ երկրպագանիցես նոցա։ Երրորդ. մի՛ դնիցես զանուն տեառն քոյ 'ի վերայ սնոտեաց։ Չորրորդ. յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն, որ է հանգիստ եօթներորդ աւուրն։ Հինգերորդ. պատուեա՛ զհայր քո և զմայր, զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկ-



րի, զոր խոստացաւ քեզ Աստուած։ Վեցերորդ. մի՛ սպանաներ։ Եօթներորդ. մի՛ շնար։ Ութերորդ. մի՛ գողանար։ Իններորդ. մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։ Տասներորդ. մի՛ ցանկանար այնց, որք են ընկերի քում։

Հ. Մի թէ չէ՞ին գրեցեալ տասնեքին պատգամքս այսոքիկ։

Պ. Ի վերայ երկուց քարեայ տախտակաց գրծագրեալք էին յաստուծոյ։

Հ. Յառաջ գիտակք էի՞ն պատգամացս այսոցիկ։

Պ. Այո՛ քանզի տասնաբանեայ պատգամքս 'ի բնական օրինաց անտի են յառաջ եկեալ։

## ԳԼ. Է։

### Յաղագս ուխտին Աստուծոյ ընդ Իսրայէլացիս։

Հ. Որպիսի կերպիւ մատուցանէին զպատարագս 'ի հնումն։

Պ. Զենուին զանասունս, և ապա խորովէին 'ի վերայ սեղանոյն։

Հ. Ո՞ւր էր սեղանն։

Պ. Առաջի խորանին վկայութեան
Հ. Զի՞նչ պահիւր ՚ի նմա։
Պ. Արկղն կտակարանաց։
Հ. Զի՞նչ էր արկղն այն։
Պ. Էր արկղ ինչ պատեալ ներքուստ և արտաքուստ ոսկւով։
Հ. Զի՞նչ պահիւր ՚ի նմա։
Պ. Երկու տախտակք օրինացն։
Հ. Ո՞յք էին քահանայքն։
Պ. Ահարոն և որդիք նորա։
Հ. Ո՞յք էին ղևտացիք։
Պ. Ամենեքեան որք ՚ի ցեղէն Ղևեայ. զորս կացուցեալ էին ՚ի սպասաւորութիւն խորանին վկայութեան։
Հ. Ո՞րպիսի ուխտ արար ԱԾ ընդ իսրայէլացիսն։
Պ. Այնպէս որպէս ընդ Աբրահամու։
Հ. Զի՞նչ խոստացաւ նոցա ԱԾ։
Պ. Խոստացաւ նոցա առնել զնոսա իւր ժողովուրդ. բնակեցուցանել յերկրին Քանանու. և տալ նոցա առատութիւն բարութեանց։
Հ. Իսկ ժողովուրդքն զի՞նչ խոստացան։
Պ. Սիրել զԱԾ յամ սրտէ իւրեանց. և պահել զօրէնս նորա։
Հ. Ո՞րպիսի պատժոյ ստորանկան նոքա։



Պ. Հալածանաց և ամենայն թշուառակրութեանց։
Հ. Դաշինս այս պահեցի՞ն բարեպէս։
Պ. Ի՛ կողմանէ ոյ բարեպէս։
Հ. Ո՞րպիսի սքանչելիս արար ԱԾ որպէս զի հասուսցէ զնոսա յերկիրն Քանանու։
Պ. Ցամաքեցոյց զգետն Յորդանան՝ յորժամ հարկ եղև նոցա անցանել ընդ այն։
Հ. Իսկ ժողովուրդքն ո՞րպէս պահեցին զպատգամսն. զայնոսիկ ըստ եղեալ դաշինսն։
Պ. Կարի չափաւորապէս։
Հ. Քանի՞ անգամ դառնացուցին զնա յանապատին պատուիրանազանցութեամբն իւրեանց։
Պ. Աւելի քան զտասն անգամ։
Հ. Զի՞նչ արարին նոքա յետ բնակելոյն ՚ի խոստացեալ երկրին։
Պ. Նոքա յաճախ երկիրպագէին կռոց ՚ի տեղի աստուծոյ։

## ԳԼ. Բ։

### Յաղագս կռապաշտութեան։

Հ. Էի՞ն յայնմ ժամանակի ևս այլ ազգք որք երկիրպագանէին կռոց։

Պ. Բազումք էին որք ըստ հաճութեան իւրեանց խոնարհեցան և արարին զնոսա։

Հ. Որպիսի կերպարանօք էին կուռքն այնոքիկ։

Պ. Ըստ կերպի առն, կնոջ, և կենդանեաց. զորս նոքա աստուածս և աստուածուհիս անուանէին։

Հ. Նոքա որպէս պատուէին զնոսա։

Պ. Նոքա աղաչէին զնոսա և մատուցանէին նոցա զողջակէզս։

Հ. Ուստի՞ ծնաւ այնպիսի կուրութիւն։

Պ. Յայնմանէ, զի նոքա մոռացան զարարիչն իւրեանց։

Հ. Նոքա որպէս մոռացան զնա։

Պ. Ընկլմնելով նոցա ՚ի մէջ ամենայն անօրէնութեանց և մոլեգնութեանց ախտացան. իսկ յետոյ զարհուրեցան և զճշմարտէն. որ զմտաւ ածել. և սատանայն յայնժամ տեղի գտեալ՝ որսացաւ զնոսա առ այն։

Հ. Զի՞նչ յառաջացաւ ՚ի կռապաշտութենէ անտի։

Պ. Նոյն իսկ՝ որ եած զնոսա յամենայն անօրէնութիւնս։

Հ. Այլով կերպիւ զիա՞րդ կոչին կռապաշտք։

Պ. Հեթանոսք։



## ԺԱ. Թ։

### Յաղագս Դաւթի և Սողոմոնի թագաւորացն Իսրայէլի։

Հ. Որպիսի կառավարութիւն ունէին Իսրայէլացիքն ՚ի չուելն իւրեանց յերկիրն աւետեաց։

Պ. Ունէին նախ դատաւորս՝ և ապա զթագաւորս։

Հ. Ո՞վ էր առաջին թագաւորն։

Պ. Սաւուղ։

Հ. Ո՞վ էր երկրորդն։

Պ. Դաւիթ։

Հ. Յո՞րմէ ցեղէ էր նա։

Պ. ՚Ի ցեղէն Յուդայ։

Հ. Ո՞ւր բնակէր նա։

Պ. Յերուսաղէմ ՚ի լերան Սիոնի։

Հ. Ո՞ւր հրամայեաց բերել զտապանակ ուխտին։

Պ. Անդանօր ՚ի լերան Սիոնի։

Հ. Զի՞նչ խոստացաւ նմա Ած։

Պ. Զի յազգէ նորա միշտ թագաւորեսցեն ՚ի վերայ ժողովրդեանն Այ։

Հ. Այլ ևս զի՞նչ։

Պ. Զի ՚ի նմանէ ծնանելոց էր փրկիչն Քրիստոս։

Հ. Զի՞նչ նշանակէ բառս այս Քրիստոս։

Պ. Նշանակէ օծեալ։

## ԳԼ. Ժ։

## Յաղագս Բաժանման [illegible]

[illegible]

Հ. Ո՞վ էր ժառանգն Դաւթի։

Պ. Սողոմոն որդի նորա։

Հ. Որպիսի՞ կառավարութիւն ունէր նա։

Պ. Հանդարտօրէն և խաղաղութեամբ։

Հ. Ունէ՞ր լաւագոյն ինչ ևս։

Պ. Ունէր զճշմարիտ իմաստութիւն։

Հ. Զի՞նչ արար նա։

Պ. Շինեաց զտաճարն Երուսաղէմի։

Հ. Գո՞յր անդ այլ ևս տաճար, յորում երկիրպագանէին աստուծոյ։

Պ. Ո՛չ. մի միայն էր տաճար, և մի սեղան։

Հ. Վասն է՞ր այդպէս։

Պ. Առ ՚ի ցուցանել այնու՝ թէ մի միայն է ած, և մի հաւատ։

Հ. Պահեաց Սողոմոն մինչև ցօր մահուան իւրոյ զիմաստութիւն իւր։



Պ. Ո՛չ. այլ իգամոլութեամբ խաւարեալ լուսոյ մտաց նորա զրկեցաւ յԱծապարգև իմաստութենէն։

Հ. Զի՞նչ եղև զկնի մահուան նորա,

Պ. Բաժանեցաւ թագաւորութիւն նորա։

Հ. Զի՞նչ մնաց որդւոյ նորա։

Պ. Յերկոտասան ցեղիցն անտի միայն երկու ցեղք, յուդային և բենիամենին։

Հ. Ո՞վ եղև թագաւոր ՚ի վերայ մնացեալ տասն ցեղիցն։

Պ. Յերոբովամ ծառայ Սողոմոնի։

Հ. Զի՞նչ արար նա առ ՚ի հաստատել զաթոռ իւր։

Պ. Նա արար զհերձուածս։

Հ. Զի՞նչ է հերձուած ասելդ այդ։

Պ. Որոշումն եկեղեցեաց։

Հ. Ո՞ւր եկաց ճշմարիտ եկեղեցին։

Պ. ՚Ի յերուսաղէմ։

Հ. Ո՞ր քաղաք էր աթոռանիստ թագաւորութեան իսրայելացւոց, և սուտ եկեղեցւոյն։

Պ. Սամարիա։

## ԳԼ. ԺԱ.

## Յաղագս Մարգարէից։

Հ. Որպիսի ոք էին մարգարէքն։

Պ. Արք լցեալք հոգւովն ածայինն։

Հ. Ո՞վ էր հոգին այն։

Պ. Հոգին սուրբ ած, որ զամ արարածս կենդանացուցէ։

Հ. Վասն է՞ր կոչէին զնոսա մարգարէս։

Պ. Վասն այն զի ի զապագայս պատմէին։

Հ. Ո՞րք բազմացան նոքա։

Պ. Զկնի բաժանման թագաւորութեանն իսրայելացւոց։

Հ. Որոց մարգարէից գրուածս ունիմք մեք.

Պ. Եսայեայ, Երեմիայի, և այլոց. որք են թըւով վեշտասանք։

Հ. Զի՞նչ գուշակեցին նոքա։

Պ. Կատարելապէս կործանումն թագաւորութեանն սամարացւոց։

Հ. Իսկ վասն Երուսաղէմի զի՞նչ։

Պ. Զի նա աւերեսցի և վերստին կանգնեսցի։

Հ. Ասացի՞ն նոքա բան ինչ յաղագս Մեսիային։

Պ. Այո՛. ասացին նոքա կանխագոյն, զամենայն զոր ինչ վասն նորա լինելոց էր։



Հ. Նախապատմեցի՞ն ինչ և յաղագս նորոյ կտակարանին։

Պ. Նոքա նախագոյն ասացին՝ թէ նա կատարելագոյն է լինելոց քան զառաջինն։

Հ. Զի՞նչ ասացին նոքա ՚ի կողմանէ հեթանոսաց։

Պ. Թէ ամենայն ժողովուրդք թողլոց են ըզկուռս, և երկրպագանելոց են ճշմարտին աստուծոյ։

## ԳԼ. ԺԲ.

## Յաղագս Գերութեան Բաբելացւոց։

Հ. Փութացաւ ած ՚ի պատժել զիսրայելացիս վասն մեղաց իւրեանց։

Պ. Երկայնամիտ լինէր առ նոսա զժամանակս բազումս. զի գուցէ՞ թէ զղջացեալ՝ դարձցին առ ինքն։

Հ. Զի՞նչ եղև ընդ թագաւորուես սամարացւոց։

Պ. Նոքա ամենայնիւ աւերեցան. իսկ տասն ցեղքն ՚ի զանազան կողմանս բնակեցան։

Հ. Ո՞վ աւերեաց զԵրուսաղէմ։

Պ. Նաբուգոդոնոսոր արքայն բաբելացւոց։

Հ. Զի՞նչ արար նա ընդ ժողովրդեանն հրէից։
Պ. Ցրուեաց զնոսա։
Հ. Ո՞ւր եկաց ճշմարիտ բարեպաշտութիւնն։
Պ. Հրէայք պահեցին զայն ՚ի ցեղս իւրեանց։
Հ. Զի՞նչ կրօն գոյր ՚ի բաբելօն։
Պ. Կռապաշտութիւն, և աւելորդապաշտութիւն։
Հ. Ո՞վ էր դանիէլ։
Պ. Այր սրբակենցաղ և մարգարէ։
Հ. Զի՞նչ արարին երեքին ընկերք նորին։
Պ. Նոքա ո՛չ կամեցան երկրպագանել կռոցն արքային բաբելացւոց։
Հ. Զի՞նչ արար նոցա՝ թագաւորն վասն այնորիկ։
Պ. Հրամայեաց արկանել զնոսա ՚ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ։
Հ. Ընդանօր զի՞նչ անցք անցին զնոքօք։
Պ. Պահեաց զնոսա Ա՟ծ սքանչելեօք։

## ԳԼ. ԺԳ.

### ՅԱՂԱԳՍ ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ ԻՍՐԱՅԷԼԱՑՒՈՑ։

Հ. Որո՞յ ձեռամբ ազատեաց Ա՟ծ զհրէայսն ՚ի գերութենէն բաբելացւոց։



Պ. Ի ձեռն կիւրոսի արքային պարսից։
Հ. Առ ի՞նչ վախճան եղև խառնակումն հրէից ընդ այլ ազգս։
Պ. Զի անհաւատք ճանաչէին զճշմարիտն աստուած։
Հ. Ընկա՞ն արդեօք հրէայքն վերստին ՚ի կռապաշտութիւն յետ գերութեանն բաբելացւոց։
Պ. Այլ ևս ո՛չ անկան։
Հ. Ո՞վ նախ հալածեաց զնոսա վասն կրօնի իւրեանց։
Պ. Անտիոքոս թագաւորն ասորւոց, որ էր ազգաւ յոյն։
Հ. Ո՞վ եկաց ընդդէմ անտիոքոսի։
Պ. Յուդայ մակաբէ, և եղբարք նորա։
Հ. Զի՞նչ արարին նոքա։
Պ. Դարձուցին զժողովուրդն ՚ի յապաշխարութիւն։
Հ. Ո՞վ կառավարեաց զհրէայսն յայնմ ժամանակի։
Պ. Նոյն այն տոհմն մակաբէի։
Հ. Ո՞վ սպառեաց զնոսա։
Պ. Հռոմայեցիք։
Հ. Ո՞վ էր թագաւորն հրէից ՚ի ժամանակի ծննդեանն Քրիստոսի։
Պ. Հերովդէս։

Հ. Մեսիա՞յ կարծէին Հրէայքն յաղագս գալստեանն Քրիստոսի։

Պ. Ոմանք կարծէին թէ Քրիստոս թագաւորելոց է ՚ի վերայ երկրի որպէս այլ թագաւորք, և զամենայն ազգս նուաճելոց է ընդ իշխանութեամբ Հրէից. և թէ ինքեանք կեալոց են ամենայն բարութեամբ, պատուով և ուրախութեամբ. և այսպիսիք կոչէին մարմնաւորք։ Իսկ այլք՝ որք ծառայէին ճշմարտին աստուծոյ հաւատով և սիրով, ըզյոյս իւրեանց ՚ի նա դնէին, և հաւատային թէ Քրիստոս գալոց է ո՛չ զերկրաւոր թագաւորութիւն հաստատել, այլ զերկնային. և ցուցանելոց է նոցա զճանապարհն ճշմարտութեան առ ՚ի փրկութիւն, և յարուցանելոց է զնոսա ՚ի մեռելոց, և տանելոց ՚ի կեանս յաւիտենականս. և ըստ այսմ կոչեցան նոքա հոգևորականք։

## ԳԼ. ԺԳ.

## Յաղագս ծննդեան Յիսուսի Քրիստոսի։

Հ. Ո՞վ էր մայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։



Պ. Սրբուհի կոյսն Մարիամ։

Հ. Յո՞րմէ ցեղէ էր նա։

Պ. Ի ցեղէն յուդայի։

Հ. Յո՞րմէ տոհմէ էր նա։

Պ. Ի տոհմէն դաւթի։

Հ. Ո՞ւմ խօսեցեալ էր նա։

Պ. Սրբոյն յօսեփայ որ էր ՚ի նոյն տոհմէ. որպէս զի նա պաշտպանիչ լինէր նորա։

Հ. Ո՞վ յայտնեաց նմա թէ նա ծնանելոց է զՅիսուս Քրիստոս։

Պ. Գաբրիէլ հրեշտակն, զոր առաքեաց Աստուած աւետել զայս։

Հ. Որպէս ընկալաւ նա զայս։

Պ. Ի պատասխանւոյ հրեշտակին թէ՝ (հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ) հաւատաց՝ թէ կոյս մնալոց էր։

Հ. Յետ այնորիկ զի՞նչ հետևեցաւ։

Պ. Բանն հօր և որդին Աստուծոյ էառ զնոյն մարդկութիւն որպէս ունիմք և մեք՝ բաց ՚ի մեղաց։

Հ. Ո՞ւր ծնաւ Տէրն մեր։

Պ. Ի բեթղեհէմ հրէաստանի։

Հ. Զի՞նչ նշանակէ բառս այս Յիսուս։

Պ. Փրկիչ։

Հ. Ո՞րպիսի հեթանոսք էին որք նախ երկիրպագին նմա։

Պ. Մոգքն որք եկին ՚ի յարեւելից։

Հ. Զի՞նչ արար հերովդէս յայնժամ։

Պ. Նա լուաւ ՚ի նոյն մոգուց. եւ գիտէր ըստ նախագուշակութիւն մարգարէից՝ թէ յայնժամ ժամանակի ծնանելոց էր մեսիայն. եւ քանզի կարծէր՝ թէ լինելոց է նա թագաւոր երկրի, երկեաւ կորուսանել զթագաւորութիւն իւր. վասն որոյ հրամայեաց կոտորել զամենայն մանկունսն՝ որք էին ՚ի բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա. որպէս զի եւ զնա ընդ նոսա մեռուսցէ։

Հ. Ո՞րպէս զերծաւ Յիսուս։

Պ. Հրեշտակն հրամայեաց յովսեփայ ՚ի բաց գնալ ընդ նմա ՚ի յեգիպտոս։ Իսկ յորժամ մեռաւ հերովդէս, նոյն հրեշտակն հրամայեաց դառնալ ՚ի յեգիպտոսէ ՚ի հրէաստան. եւ յովսեփայ հնազանդեալ գնաց ըստ հրամանի տեառն ՚ի քաղաքն գալիլեացւոց, որ կոչիւր նազարէթ։

## Գլ. ԺԵ.

## Յաղագս Յոհաննու Մկրտչին։

Հ. Ո՞յր որդի է սուրբն յոհաննէս։



Պ. Զաքարիայի եւ եղիսաբեթի, որ էր մօրաքոյր սրբուհւոյ կուսին Մարիամու։

Հ. Ո՞ւր բնակեցաւ նա։

Պ. ՚Ի յանապատի։ եւ ունէր զկեանս կարի ժուժկալս։

Հ. Խօսեցա՞ն ինչ զնմանէ մարգարէքն։

Պ. Նոքա նախագուշակեցին զնա՝ կարապետ մեսիայի։

Հ. Զի՞նչ է կարապետդ այդ։

Պ. Նա որ նախընթաց լինի առաջի ուրուք։

Հ. Զի՞նչ քարոզեաց յոհաննէս։

Պ. Յորդորեաց զամենեսեան յապաշխարութիւն։

Հ. Զի՞նչ արար ընդ այնոսիկ զորս դարձոյց։

Պ. Մկրտեաց զնոսա ընկղմելով ՚ի յորդանան գետ։

Հ. Մկրտեա՞ց նա եւ զՅիսուս։

Պ. Այո՛. Յիսուս կամեցաւ մկրտիլ առ ՚ի հաստատել եւ ՚ի սրբել զմկրտութիւն քրիստոնէական։

Հ. Զի՞նչ պատահեցաւ ՚ի ժամ մկրտութեան նորա։

Պ. Հոգին սուրբ էջ ՚ի վերայ նորա ակներեւ. եւ լսելի եղեւ յերկնից ձայն հայրական,

Թէ դա է որդի իմ սիրելի ընդ որում ես հաճեցայ։

Հ. Զի՞նչ վկայեաց Յովհաննէս վասն Յիսուսի Քրիստոսի։

Պ. Վկայեաց թէ նա փրկել զաշխարհս ՚ի մեղաց, և ՚ի դատապարտութենէ նորին։

## ԳԼ. ԺԶ.

### Յաղագս կոչմանն Առաքելոց։

Հ. Ո՞ւր գնաց Յիսուս յետ մկրտութեանն իւրոյ։

Պ. ՚Ի յանապատ։

Հ. Զի՞նչ արար նա անդ։

Պ. Պահեաց զքառասուն աւուրս։

Հ. Ո՞րպէս կոչեաց զաշակերտս իւր։

Պ. Ասաց նոցա՝ եկայք զկնի իմ. և նոցա վաղվաղակի թողեալ զամենայն՝ չոգան զհետ նորա։

Հ. Զի՞նչ են աշակերտքդ։

Պ. Մարդիկ որք ունկնդիր լինին ուսուցչին իւրեանց, և հետևին վարդապետութեան նորա։

Հ. Զի՞նչ նշանակէ անունն առաքեալ։



Պ. Դեսպան կամ էլչի։

Հ. Քանի՞ առաքեալս ընտրեաց Քրիստոս վասն իւր։

Պ. Երկոտասան։

Հ. Ասա ինձ զանուանս նոցա։

Պ. Սուրբն պետրոս, և սուրբն անդրէաս եղբայր նորա. սուրբն Յակոբոս, և սուրբն Յովհաննէս որդիքն զեբեդեայ, սուրբն Փիլիպպոս, սուրբն Բարթուղիմէոս. սուրբն Մատթէոս, սուրբն Թովմաս. սուրբն Յակոբ, և սուրբն Յուդայ, որ է Թադէոս, որդիքն ալփեայ. սուրբն Սիմոն, և մատնիչն հրէից յուդայ իսկարիովտացի։

## ԳԼ. ԺԷ.

### Յաղագս քարոզութեան Յիսուսի Քրիստոսի։

Հ. Զի՞նչ արար Յիսուս։

Պ. Քարոզեաց ՚ի քաղաքս, ՚ի գիւղս, և յայլ տեղիս։

Հ. Զի՞նչ քարոզեաց նա։

Պ. Զաւետարանն արքայութեան երկնից։

Հ. Զի՞նչ նշանակէ բառդ աւետարան։

Պ. Աւետիք կամ պատգամ ախորժելի։

Հ. Զի՞նչ է արքայութիւն երկնից։

Պ. Պարգեւ աստուծոյ վասն ճշմարիտ հաւատացելոց եւ բարեպաշտից եւ կեանք յաւիտենական ընդ Քրիստոսի եւ ընդ սրբոց։

Հ. Զի՞նչ ասաց Յիսուս վասն ինքեան։

Պ. Զի նա էառ զմարմին եւ յայտնեցաւ ՚ի մարդկութեան զի փրկեսցէ զմարդ։

Հ. Զի՞նչ հրամայեաց առնել։

Պ. Հաւատալ ՚ի նա, հնազանդել վարդապետութեան նորա, եւ ապաշխարել։

Հ. Վասն է՞ր ապաշխարել։

Պ. Վասն ընդունելոյ զթողութիւն մեղաց։

Հ. Ո՞չ հաստատէր՝ թէ ինքն է որդին Աստուծոյ։

Պ. Սքանչելեօք։

Հ. Զի՞նչ սքանչելիս արար նա։

Պ. Բժշկեաց զամենայն ցաւս, հալածեաց զդեւս, եւ յարոյց զմեռեալս։

Հ. Զի՞նչ օրինակս եցոյց նա մեզ։

Պ. Զամենայն առաքինութիւնս մանաւանդ զխոնարհութիւն, զհեզութիւն, զգթածութիւն, զողորմածութիւն, եւ զնախանձ վասն ճշմարտութեան։

Հ. Զի՞նչ էր վախճան գործոց նորին։

Պ. Փառք հօրն իւրոյ, եւ լրումն կամաց նորա։



Հ. Որպիսի՞ աղօթս ուսոյց մեզ։

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ։

Հ. Գնայի՞ն արդեօք ամենեքեան զհետ նորա կամ լսէի՞ն քարոզութեան նորա։

Պ. Ժողովուրդք յամենայն ուստեքէ գունդ գունդ գնային լսել զքարոզութիւն նորա. բայց միայն այնոքիկ որք տուեալ էին զինքեանս ՚ի կամս ախտից, ոչ անսացին խրատուց նորա, եւ ոչ կամեցան ՚ի բաց կալ յանօրէն վարուց. վասն որոյ՝ քարոզութիւն նորա խայթէր զխիղճմտանս նոցա. ուստի եւ ծնաւ ՚ի նոսա նախանձ ընդդէմ նորա։

Հ. Ո՞յք էին առաւել թշնամիք նորա։

Պ. Դպիրքն եւ փարիսեցիքն։

Հ. Որպիսի՞ ոք էին դպիրքն։

Պ. Ուսուցիչք օրինաց։

Հ. Իսկ փարիսեցիքն ո՞յք էին

Պ. Այնոքիկ՝ որք գեր քան զամենայն զպահ-

պատուէն օրինաց պարտականութիւն դնելին ինքեանց։

Հ. Նուաքենաբար կենդաղալարքէն նոքա։

Պ. Ո՛չ. այլ ըստ մեծի մասին կեղծաւորք էին նոքա։

Հ. Յո՞ր վայր աղդեաց չար նախանձ թշնամեացն Յի։

Պ. Մինչև ցայն, զի ջանացին մեռուցանել զնա։

Հ. Ո՞վ խոստացաւ մատնել զնա նոցա։

Պ. Յուդայ իսկարիովտացի, մի յերկոտասանից աշակերտաց նորա։

Հ. Որքանո՞յ վաճառեաց։

Պ. Երեսուն արծաթոյ։

## ԴԱՍ. ԺԲ.

### Յաղագս չարչարանաց և մահուանն ՅԻ ՔԻ։

Հ. Յո՞րում ժամանակի մեռաւ Յիսուս։

Պ. Ի ժամանակի զատկին, զոր պասեք ասէին։

Հ. Զի՞նչ արար ՚ի վերջին երեկոյին ընդ աշակերտսն իւր։



Պ. Կամելով հաւատարմացուցանել՝ թէ ո՛չ է մեկնելոց յամենայն հաւատացելոց. աւանդեաց զխորհուրդ սուրբ հաղորդութեան։

Հ. Որո՞վ կերպիւ։

Պ. Առեալ զհաց, օրհնեաց և ետ նոցա ասելով. այս է մարմին իմ. և ապա առեալ զբաժակն գինեաւ՝ ասաց. այս է արիւն իմ որ հեղանի ՚ի թողութիւն մեղաց. և ՚ի վերայ այսպիսի խորհրդոյ հիմնեաց զնոր ուխտ մարդկան ընդ աստուծոյ։

Հ. Յետ երեկոյին զի՞նչ արար Յիսուս։

Պ. Առանձնացեալ եկաց յաղօթս որպէս զմարդ և ետ զինքն ՚ի կամս և ՚ի հաճութիւնս հօր։

Հ. Յայնժամ Յուդայ զի՞նչ արար։

Պ. Ած զինուորս զի կալցեն զՅիսուս։

Հ. Ու՞ր տարան զնա։

Պ. Առ քահանայապետն կայիափայ։

Հ. Պետրոս զի՞նչ արար։

Պ. Ի հարցանելն թէ աշակերտ իցէ Քի, ուրացաւ զնա. սակայն յետ այնորիկ մեծապէս զղջացաւ։

Հ. Ի կայիափայէ ու՞ր ածին զՅիսուս։

Պ. Առ պիղատոս։

Հ. Զի՞նչ արարին նմա անդ։

Պ. Եդին ՚ի գլուխ նորա զպսակ, արարեալ ՚ի փշոց։

Հ. Եւ ապա զի՞նչ։

Պ. Հանին զնա ՚ի խաչ։

Հ. Որպէս աւանդեաց նա զհոգին իւր ՚ի վերայ խաչին։

Պ. Այսու բանիւ. Հա՛յր ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. յայնժամ բաժանեցաւ հոգին ՚ի մարմնոյն։

Հ. Զի՞նչ պատահեցաւ ՚ի ժամու մահուան նորա։

Պ. Արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։

Հ. Մահ նորա որպիսի՞ կերպիւ եղև պատարագ։

Պ. Վասնզի մահն ելից զաստուածային արդարութիւնն վասն մեղաց ամենայն մարդկան. որոյ աղագաւ արկեալք էին ՚ի ներքոյ յաւիտենական մահուան։



## ԳԼ. ԺԹ։

## Յաղագս Յարութեան Յիսուսի Քի։

Հ. Յետ մահուանն Յի զի՞նչ արարին ընդ մարմին նորա։

Պ. Եդին ՚ի գերեզմանի։

Հ. Թշնամիք նորա զի՞նչ արարին։

Պ. Գիտելով նոցա զմարգարէութիւնն, թէ Քի պարտէր յառնել. եդին զպահապանս, երկնչելով զի մի՛ կատարեսցի այն ՚ի վերայ նորա։

Հ. Յորում աւուր յարեաւ Յիսուս։

Պ. Յերրորդում աւուր յետ մահուան իւրոյ։

Հ. Փութո՞վ հաւատացին առաքեալքն յարութեանն Յի։

Պ. Նոքա տեսին զնա և շօշափեցին։

Հ. Որքան ժամանակս եկաց նա ընդ նոսա։

Պ. Զաւուրս քառասուն։

Հ. Զի՞նչ պատուիրեաց նոցա։

Պ. Երթալ յաշխարհ ամենայն, քարոզել ճըշմարտութեամբ ամենեցուն զհաւատս և ըզբարեգործութիւն. դարձուցանել յանօրէն վարուց. ածել զնոսա յապաշխարութիւն.

և որք անկեղծօրէն ընդունին զքարոզու-
թիւն նոցա, միաւորել զնոսա մկրտութե̄
ընդ սրբոյ եկեղեցւոյ։

Հ. Պ՝ ձեւն խորհրդոյ մկրտութեան զի՞նչ
ուսոյց նա մեզ։

Պ. Թէ հայր որդի և սուրբ հոգի է ճշմա-
րիտ Ա՟ծ։

Հ. Որպիսի իշխանութիւն ետ առաքելոց
իւրոց։

Պ. Թողուլ զմեղս։

Հ. Նա ո՞րպէս եթող զնոսա։

Պ. Համբարձաւ յերկինս ական յանդիման նոցա
ամենեցուն։

Հ. Յո՞րպիսի կացութեան յայսմ յօրէ մնայ նա
մինչև ՚ի յաւիտեան։

Պ. Նովիմ մարմնովն, ՚ի վեր քան զամենայն
արարածս փառաւորեալ յամենայն արա-
րածոց։

Հ. Զի՞նչ խոստացաւ առաքելոց ՚ի ժամ
համբարձմանն իւրոյ յերկինս։

Պ. Խոստացաւ ոչ մեկնիլ յեկեղեցւոյ իւրոյ,
և յիւր քրիստոնէից մինչև ցկատարած աշ-
խարհի։

Հ. Այլ ևս գալո՞ց է յաշխարհ։

Պ. Արդարև գալոց է ՚ի դատել զկենդանիս
և զմեռեալս յաւուրն յետնում։



## ԳԼ. Ի։

### Յաղագս էջման Հոգւոյն սրբոյ յառաքեալսն։

Հ. Զի՞նչ էր պենտեկոստէն, կամ յիսնեակն
հրէից։

Պ. Էր տօն մեծ, յորում Ա՟ծ տուեալ էր նո-
ցա զօրէնս։

Հ. Յայնմ աւուր զի՞նչ պատահեցաւ առա-
քելոցն։

Պ. Նոքա ընկալան զհոգին սուրբ։

Հ. Որպիսի զօրութիւն ազդեաց ՚ի նոսա։

Պ. Լուսաւորեաց զմիտս նոցա՝ առ ՚ի իմա-
նալ զգիրս սուրբս։

Հ. Զի՞նչ ևս զգացին նոքա։

Պ. Սէր մեծ առ Ա՟ծ։

Հ. Ի յընկալնուլն նոցա զհոգին սուրբ զի՞նչ
արարին նոքա։

Պ. Սկսան խօսիլ զլեզուս զանազանս։

Հ. Զի՞նչ նշանակեաց սքանչելիքս այս։

Պ. Թէ պարտէր նոցա քարոզել զաւետարանն
ամ̃ ազգաց։

Հ. Յայնժամ սուրբն Պետրոս զի՞նչ ա-
րար։

Պ. Լցեալ հոգւով սրբով սկսաւ քարոզել կարի

ազդեցութեամբ, որով զբազումս էած 'ի զղջումն. և վկայութեամբ ստուգեաց զաւետարանական ճշմարտութիւնն, այնքան՝ մինչ զի 'ի նմին ժամու դարձան 'ի ժողովրդենէ անտի իբրև երեք հազար արք։

Հ. Ապա նա՝ և միւս առաքեալքն զի՞նչ արարին։

Պ. Նոքա Աստուածային զօրութեամբն արարին զսքանչելիս մեծամեծս. և քարոզութիւն նոցա էր հոգւովն այ, որով ածէին զամենայն ժողովուրդս 'ի հաւատս Քրիստոսի։

Հ. Վասն է՞ր հոգին սուրբ առաքեցաւ 'ի նոյն աւուր պենտեկոստէի։

Պ. Զի 'ի նմին իսկ աւուր յայտնէր զնոր օրէնս, յորում տուեալ էր զհինն։

030455